'ի թագաւորութենէ իւրմէ, որոյ վասն պատգամաւորս առաքեաց առ Սուլթանն կնքել զպայման հաշտութեան որ և իցէ եղանակաւ։ Գիտակ իսկ էր Սալահատին թէ՝ որչափ զօրս և գանձս կորուսին Լատինք 'ի պատերազմունս յայսոսիկ զոր մղեցին ընդդէմ ինքեան, և դադարեալ էր գալուստ օժանդակ զօրացն յԵրուսալիոյ։ Թէպէտ և ինքն եդեալ էր 'ի մտի խսպառ մաքրել զՍուրիա յօտար ազգաց որ խոչն էին Իսլամաց։ Սակայն յաջողութիւնք բաղդին և ժամանակին ոչ արդիւնաւորեցին զխորհուրդ իւր, ուստի 'ի ժողովի իշխանաց իւրոց յայտ առեալ ասէ, 'ի բաղում պատերազմունս մտեալ եմ ընդ ձեզ եւ 'ի բաղում ուրեք կանգնեցաք զյաղթանակն, տիրեցաք քաղաքաց եւ աւանաց ժառանգելով զանուն քաջութեան, երկնչիմ գուցէ յանկարծ հասանիցէ օրհաս մահուն եւ խափան լիցի գործոյս, յոր եղէ ձեռնամուխ։ Իսկ իշխանք եւ զօրագլուխք տաղտկացեալք 'ի պատերազմաց ետուն պատասխանի, ամրութիւնք տապալեցան, երկիրն ամայացաւ 'ի չգոյէ բնակչաց, վիշտք և տաւապանք անընդհատ պատերազմիս՝ պարտասեալ լքուցին զձեռս քաջազուն զօրաց։ 'ի վերայ այսր ամենայնի ոչ է արժան խսպառ ընկղմել զԵրուսաղեմս 'ի խորս յուսահատութեան, գուցէ դումարեսցին վերստին 'ի վերայ մեր և յափշտակեսցեն զերկիրս մեր, ուստի պարտ է առնել խաղաղութիւն և նորոգել զաւերեալ տեղիս։ զի եթէ նոքա ըստ բնածին սովորութեան իւրեանց լուծցեն զդաշնն, յայնժամ և մեք պատրաստիմք 'ի մարտ ընդդէմ նոցա։ Հաճեցաւ Սուլթանն ընդ խորհուրդս նոցա և գրպրապետն Ամատ գրեաց զպայմանս հաշտութեան։ ընդհանուր զինադադար 'ի Ծովու և 'ի ցամաքի ամս 3 և ամիսս 8։ 'ի Յոպպէ քաղաքէ մինչեւ 'ի Տիւրոս մնալ 'ի ձեռս Լատինաց։ թողուլ զԱկռոն աւերակ։ Լիւդիայի և Ռեմլէի լինել կիսաբաժին 'ի մէջ քրիստոնէից և Իսլամաց։ զերկիրն Իսմայիլիյէ մուծանել 'ի դաշինս Սուլթանին։ զԱնտիոք և զԹարապուլուս մուծանել 'ի դաշինս Լատինաց։ Քրիստոնեայք առանց զինու երթիցեն յԵրուսաղէմ։

Եւ 'ի լինել բանի երդման, Ռիգարտոս ոչ առ յանձն, զի չէր օրէն առն թագաւորի երդնուլ, այլ միայն կալաւ զձեռս Սուլթանին, եւ նա հաճեցաւ ընդ այն։ Երդուաւ